

զապէս պատմել արժանաւոր անձի մը և ժամանակի գէպէբէր . ընթերցողաց թողով զհամոզումը . թէ և միշտ մեծագոյն փափազս է ազգերնուս սէրն և օգուար , նաև՝ ի չմիաբանելն կարծեաց . — զայս ալ ստիպուիմ ըսելու , տեսնելով թէ բնչպէս որ և է անձանց խօսք և խօսքէ վեր բաներ անդամ՝ բաւական չեն՝ ի համոզել զմիտս . — միայն երկնաւոր անապակ սիրունակ շնորհքն է շահիչ սրակ և գերիշ մտաց : Վասն որոյ և Շնորհաւոյ մը վարք ընտրեցինք՝ մեզի զբաղանք ՚ի ժանեւոր ժամանակին , նմանակցաց կամ կարեկցաց՝ սփոփանք , և հասարակաց պիտանի զարմանք :

Յետ մեր միտքը յայտնելու՝ կը յուսամք որ ներողամիտ ըլլան ընթերցողք՝ եթէ՝ ՚ի վերայ այսր ամենայնի ակամայ ծանր կամ ծուռ բան մ՝ ըսած ըլլանք . մանաւանդ եթէ կրօնական ինդրոյ մը վեյցօք ըլլայ այս , հիմկուց յայտնեմք՝ որ կրօնական բարձրագոյն դատաստանին կ'ուզեմք միշտ հապտակիլ . թողովուրիշ ինդիլները՝ իւրաքանչչւր կամաց և քմաց :

ՀԱՅԻ ՊԱՏԱՌԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴ

ՆԱՄԱԿ ԳՍԱՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

(Տես Երես 125:)

Անշուշտ եմ որ մեծ անձկութեան մէջ իյնալու էիր , եթէ նախաճաշդը ընելու համար հարկ ըլլար Սէնին խորը երթայիր . անկարելի էր թէ պատառը կլլէիր և ջուրը քթէդ ներա չհոսէր : Զիազետին ատոր նկատմամբ անհանգիստ ըլլալու բան մը չունի : Ոնդանց մտից առջել երկու դուռ տրուած է իրեն , զորոնք ըստ կամն կրնայ գոցել , և որոնց ետելը մինչդեռ ջրին մէջ կ'երթեեկէ իր թռքերը շատ հանգիստ կը մնան : Հիմա բուսաբանական պարտէզը ձիազետի մը կայ . գնա այն կողմերը պարտելու . խոշոր փոր մը կը տեսնես որ գըեթէ գետինը քսուելով կը քալէ , և շատ զարմանալու չէ . շատ տեղւոյ պէտք կար այն պրտուները , այն եղէ գնելու , և գետոց յատակի խոտերը զետեղելու , որ շատ մննդարար չեն : Ուստի նաև ձիա-

գետիին ստամփսը ոչ միայն երկու բաժանմանց երեսոյթն ունի , ինչպէս բուռ ձիունը , այլ նաև կարծես թէ երեք կամ չորս հատ ունի : Զիազետիին վըրայ խօսքս լմբնցընել ուղելով , այս ալըսեմ որ իր ատամանց փղոսկրը շատ աւելի զեղեցիկ է քան զիզին ժանեացը , անոր համար ալ ատամանայարդարք անոնցմով գեղեցիկ ակռաներ կը շինեն անոնց համար՝ որ իրենց արուեստին կը դիմեն : Այս բանս ալ քեզի շատ հարկաւոր չէ . բայց չգիտցուիր թէ ինչ բան կրնայ հանդիպիլ . նայէ որ երբեք ձիազետիի ակռայ չառնուս . շատ շուտ կը զեղնին , որով անոնց տուած գեղեցկութիւնը ստըլին զոհին համեմատ չէ :

Կ'ուղէի քանի որ հսկայ կենդանեաց վրայ է խօսքը՝ ոնզեղջիւրին վըրայ ալ խօսիլ քեզի . սակայն անշահ նիւթ մըն է : Շնատամի չունի , երբեմն ալ հերձատամէ զուրկ է , մերթ ալըստ վկայելոյ բնապատմից և ըստ տեսակաց՝ մինչև երեսունուվեց ակռայ ունի . և ահա այսչափ է ըսելիքս այդ խոշոր մնի զանդուածին նկատմամբ , որ որչափ արտաքուստ այլանդակ է , նոյնչափ կանոնաւոր է ներքուստ : Այս կենդանիս է ահա որ զիսաւորապէս թանձրամորթ անունը կրելու արժանի է , իր մորթն այնշափ թանձր ու կարծր է , որ հրազինուց գնտակները վրայէն կը սահին : Սակայն այս բանս հիմա մեր խօսքին նիւթ ըլլալու չէ , ինչպէս և ոչ քթին վրայ ունեցած եղիլիւրը . հապա օր մը եթէ մորթին և անոր հետ շաղկապ ունեցող բաներու վրայ խօսելու ըլլամքեզի . ան ատեն ասոնց կարգն ալ գուցէ կու զայ :

Խոզը շնատամունք ունի , և շատ ամուր շնատամունք . սակայն իր վարագ կոչուած վայրենի վիճակին մէջ է , որ այս ակռաներս իրենց իրական ձեռփը կը տեսնուին : Վասն զի այն ատեն այն ակռաներն բերնէն գուրս կը ցցուին ու կոր ձեւ մը կ'առնուն , որովհետև թանձրամորթից մէջ այս բանս բաւականապէս ընդհանուր է . և ահա ասոնց վրայ կը կայանան այն սրածայր ու հատու

ահաւոր պաշտպան ժամնիքները, որ այն չափ որարգաց աղետալի եղած են: Մեր անտառաց վարազը մեր ընտանի խողին հայրը կը համարուի. և եթէ այս բանս ճիշդ է, ինչպէս հաւանական կ'երևայ, աղեկ օրինակ մը կ'ունենանք ասով՝ թէ ինչ ազդեցութիւն ունի մարդս իր ընտաննեցուցած կենդանեաց կազմուածքին վրայ: Վարազը պատուղներով և արմատներով կը սնանի, զորոնք, ձիազետիին նման, ժանիքներովը գետնէն կը իւլէ. ժանիք՝ որ անտառային կենաց պատահարներուն պաշտպանութիւնը են: Մարդուս ծառայութեանը մէջ, աշխատութիւնն ու կուտը մոռնաւ լով ծոյլ վատ ու շատակեր կենդանի մը եղեր է, ամեն բան ուտելու տուեր է ինքզինքը, ինչ ալ իյնայ տաշտին մէջ, մինչև միս ալ. և որպէս զի այդ գործը աղեկ յաջողցընէ, իր կոռուի շնատամունքը, այն սպառնական զէնքերը և անօգուտ ակրաները, բերնին մէջ ամփոփեր և այսպէս իր սուրը պատառաքաղի փոխեր է. Թաթար մըն է որ Զինացի փոխուեր եղեր՝ է:

Այս բանս ինձի գաղափար մը կ'աղպէ ձիուն նկատմամբ, որուն քննութիւնը կը մնայ մեզի ընել, ըստ որում կարևորագոյն թանձրամորթից մէջէն յետինն է: Զին ալ նմանապէս շնատամունք ունի, այլ ամենափոքր են. և ինչպէս ըսենք հերձատամանց և աղօրեաց մէջ տեղ եղող պարապ միջոցի մը մէջ կորսուած, այն միջոցին մէջ ուր մարդ սանձը յարմարցուցեր է, որով զձին կը սանձէ: Որչափ ալ պղտիկ են այդ շնատամանք, նշան մըն են միշտ թէ կրնայ միս ալ ուտել, որովհետեւ շնատամը մսակեր կաթնառուին որոշիչ

1 Զինասաանը, որուն վրայ քանի մը տարիէ ՚ի վեր այնչափ կը խօսուի, շատ անգամ արշաւանաց ենթակայ եղած է Մէծ Թաթարստանի պատերազմիկ ժողովրդոց կողմանէ: Սակայն ամեն անգտմուն ալ, երկրորդ կամ երրորդ աղքէն ետեւ, յաղթողքն՝ յաղթուողաց թուլամորթութիւնը ու ոտլորութիւնները առեր են. անանկ որ այնչափ աշխարհակալութեանց հետեւանքն ուրիշ բան չէ եղած, բայց եթէ միլինաւոր Թաթարներ Զինացի փոխել:

Նշանն է: Կարգացեր շեր թէ ուր, թէ կարե կարելի է ձիուն սովորաւոր ուժ մը արտ կերցնելով անոր, և ն թողք կ'աւանդեն մեզ ժամանակի թագաւոր յին մարդիկներ կը նես թէ ճանչնայի հարուստ որ հետաքրքրական բն թեանը համար շատ նետել, իրեն կ'ուղեկի մասնաւոր եկամուտ պէս զի ձի մը որգեց կրոյ ենթարկեր, միշացացնելով: Գրաւագի ձեալ ինչ կ'ուղեն, որ ետեւ անոր շնատամու մեծնան բերնին մէջ մլան որ երասանակը գուցէ և ոչ իսկ ձիափորձելու բանը ըլլայ: մէկդի ձիուն ունենակուաներն, որպէս զի ները քննենք: Խւրաքարայ վեց վեց հերձաս ասսնք երկայն ակռան դէպ ՚ի առջև ուղղուա վրայ տարուէ տարի տէ ՚ի յայտ կու գան որոն դանւոյն տարկը կը հս ակռաները տափակ ու ապականիւթ թիթեղ եղած, որ չորս բոլոր ձեւացնեն, և յարդը կը մելու ամենայարմար նար գարձեալ, եթէ ա աճքը՝ Անդզիացւոյն ա տու փոխուէին, որու մատ ճարտար է կեն անտես ճարտարապես լու, երբ տանտէրը իր ըը կը փոխէ:

8. Որո՞ւն

Բոլոր կենացս մէջ աղեկ յիշատակ մը

վասն զի պատճառ եղան որ գաղղիոյ
հոչակաւոր համալսարանին աշկերտաց
բնական պատմութեան համար տրուած
առաջին մրցանակն ես առնեմ։ Եթէ
առոր վրայ քեզի խօսք կ'ընեմ, անօր
համար է որ այդ բանը մեր նամակնե-
րուն ճակատը դրած պղտի ուղերձին
մեկնութիւնը կու տայ։ Անկէ ՚ի վեր ե-
րեսուն տարի կայ, և ստոյգն ըսել կ'ու-
ղեմ քեզի առանց ամօթ զգալու, որ
դեռ ևս այսօր ալ այդ որոնող անունը
ականջս հաճելի եղանակաւ մը կը
խողաէ. որովհետեւ իմ կենացս մեծ
հպարտութեներէն մէկը կը յիշեցնէ այն
պատիւն ըսել կ'ուղեմ, զորինծի, դպրո-
ցի ստահակիս, այն հոչակաւոր մարդն
ըրաւ, որուն անունն գրքուկիս սկիզ-
բը մաղթեցի զիս իր տունը կանչելով,
որպէս զի մօտանց տեսնէ այն նորաբայս
զիտունն որ անանկ աղէկ խօսեր էր ո-
րոնողաց վրայ։ Այլ աւաղ, երեսուն
տարի անցած է անկէ ետև, որովհետեւ
1834ին էր։ Ինչպէս առաջ քեզի ըսեր
եմ, 1830ին ապստամբութեանը պար-
տական ենք՝ եթէ մեր ուսումնականու-
թեան մեծ առաջնորդը բռնադատուեր
են շաբաթը երկու ժամ՝ դպրատանց
մէջ բնութեան քննութեանցը զոհելու։
Այս, սիրելի դու, ասկէ աւելի ժամա-
նակ չկայ քանի որ մեր դպրատանց մէջ
բնական պատմութիւնը սկսեր են սոր-
վեցնել, և ինչ որ ես սորվեցնելու ձեռք
զարկի քեզի՝ որ պղտի աղջիկ մըն ես,
այսօրուան օրս ճերմակ մազ ունեցող
մարդիկ, իրենց ուսմունք ըսածը լմըն-
ցուցեր են առանց անկէ բան մը սոր-
ված ըլլալու։ Կը տեսնես որ աղէկ եղեր
է կանխաւ ծնած չըլլալու, և թէ երբ
կ'ուղես դաս տալու մարդ կը գտնես։
Սակայն դաս տալէդ առաջ հարկ է դու
ալ դաս առնելը լմնցնես։ Ներէ ինծի
այսպէս ակամայ անցած ժամանակի
ուրախութե յիշատակներս յիշելուս,
անանկ ժամանակի մը՝ որ քեզնէ աւելի
խելօք չէի, ու դառնանք մեր բարեբար
որոնողաց, որ ընդհանուր մարդկութե
սնուցիչ են։

ՆԱՄԱԿ ԱՅ.

Կարևուուք (Հարունակուրիւն)։

Աշխարհիս մէջ ամենայն ինչ իր պաշ-
տօնն ունի, սակայն անանկ խորհրդա-
ւոր պաշտամունք ալ կան, որոնց նպա-
տակը ըմբռնել չենք կրնար։ Որոնողաց
պաշտօնն այնպէս յատակ է որ մէկէն
աչքի կը զարնէ։

Ես որպէս զի այսօրուան օրս մնացդ
առջեր դրած կերակուրս կարենամ
ձեռք բերել, հարկ եղեր է որ շատ մը
դրբերէ քաղեմ, որոնցմէն դու շատ բան
հասկրնալ չէիր կարող. հարկ եղեր է
որ կարդացած երկայն ատեն որոնեմ,
և զլիտւս մէջ, որ առանց պարծելու
քուկինէդ շատ աւելի ընդունակութիւն
ունի, ծանր ծանր մարսեմ. և այս պար-
ծանքը իմ տարիքիս համար մեծ բան
մը չէ։ Եթէ ձեռնարկիս մէջ յաջողեր
եմ, պէտք է շահուած ըլլաս բոլոր իմ
այդ աշխատութենէն՝ զոր յանձն առի
որ առանց մեծ աշխատութեան քու
միաբդ մնուցանեմ, որով, և զրեթէ ի-
րաւունք կ'ունենամ ըսելու թէ ինծմէն
մնած ըլլայ. իմ կանթեզս կրնայ ըսել
քեզի թէ որչափնեղութիւն քաշեր եմ
երբեմն, որպէս զի քեզի էջ մը տամ
որ կարդաս ու սորվիս առանց ձանձրա-
նալու։

Այսպէս կ'ընէ որոնողը։ Իր պաշտօնն
է որ երթայ զաշտաց մէջէն անանկ կե-
րակուր մը ժողովելու ուսկից իր ստա-
մբքսէն նուազ կատարեալ ստամբքսներ
խորշում զգալու էին, և նոյնը իր ներսի
դին պատրաստելով համեղագոյն և
նուազ անմարս կերպարանքի մը փո-
խէ։ Պղտի մնակերդ ապա այն խնջոյքին
կը վազեն, և խնջոյքը նոյն ինքն է։

Բոլոր որոնողին պատմութիւնն ու-
րեմն իր ստամբքսին մէջն է։ Մարսեն՝
իր բուն պաշտօնն է, և այս բանիս հա-
մար իր օրուան լաւագոյն ժամերը այդ
բարեբար մարսողութիւնը գործադրե-
լու կը գործածէ, որ այնչափ տկար ստա-
մբքսներուն յոյսն է։

Միթէ երբեմն զբօսանքն ունեցեր
ես զաշտի մը մէջ պառկած մեծ եղ մը
տեսնելու : Երկայն ատեն է քանի որ
խոտ ուտելէն դազրեր է , և սակայն իր
ժամելիքը շարունակ իր վրան պտոյտ
առնելով , միշտ շարժելու հետ է , նման
նկարչի մը ներկերուն երկանին որով իր
դոյները կը տրորէ : Աղէկ դիտէ . ամ-
բողջ ժամեր մի և նոյն դրից մէջ կը մնայ
անշարժ և խոհուն եղանակաւ , այդ ա-
նըմբոնելի ծափիչ գործողութեան մէջ
ընկղմած , մերթ ընդ մերթ անտես սր-
նունդ մը իր կոկորդին մէջէն վար կը
կլորարկէ : Այլ չըլլայ որ զինքը ծաղր
ընես . ինքն իր որոճողի պաշտօնն ընե-
լու հետ է . կ'որոճայ :

Որոճալը , կլածը նորէն ծամել ըսել
է , և որչափ ալ այլանդակ երենայ քե-
զի այդ բանը , գիտցիր որ բոլոր որոճողք
նոյն այդ գործը կ'ընեն : Կը յիշես կապ-
կին այտից տակը եղած քսակները , որ
անոր իբր կերակրոց պահարան կը ծա-
ռայեն , և ուսկից ուտելու պաշարները
նորէն ելլելով՝ ակռային տակը կու գան
կ'իյնան . որոճողն ալ նմանապէս այս
տեսակ ահազին քսակ մը ունի , ուր
տեղ , ճարակելու ատենը , շտապաւ խո-
տը առատաբար կը մացնէ : Թերես կար-
ծես որ խոտին մէջ քիթը ընկղմած ա-
տենը կենդանին կ'ուտէ : Այլ չէ . պատ-
րաստութեան գործ մըն է որ կ'ընէ .
շտապաւ իր կերակրոց պահարանին
մէջ վերջէն ուտելիքը կ'ամբարէ : Միայն
թէ փոխանակ այտից նեղքեն ըլլալու ,
ուր այդ խոտոյ մեծ ընդունարանին
զետեղուելուն բաւական միջոց չկայ ,

այդ կերակրոյ պա-
մէջ տեղն է , որկոլ
ընդգէմ յարմարցու
ծեղբուած է , անան
վակ մը կը նմանի՝ որ
ները մէկմէկու վրայ
կատար կերպով գոյ
կը ձևացնեն , որ ոչի
բացուելու պատրա-
մեծ մեծ կոյտերը ա-
լան , խողովակին շըջ
ճնշեն , որ տեղիք
պաշարուց քսակին
քաղիրք կ'ըսուի , և
Մէյմը որ քսակը ա-
նին , ալ իր ճաշը ապ-
թայ խաղաղ անկին
ծանր ծանր կարեսը
կը զբաղի , որ իր է
պատճառն է : Քսակի
վար , ուրիշ երկրորդէ
առջի քսակին ե
բաց մասին հետ կը
զաղղիացի բնապա-
են , անոր ձեին մէջ
թիւն նշմարած ըլլ
այն ատեն կը կծկի ,
յելով , և ինչպէս գո-
լար , քաղիրթին մէջ
բըռնէ . կծկի մը կ'ը
կը նետէ . որկորն ա-
մուելով , զայն բերն
տեղ այս անգամուն
պէտք է աղէկ կերպ

ՎԵՆԵՑԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՄՐԲՈՅՆ ՂԱԶԱՐ